Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան

ավագ դպրոց > ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Դպրոց–ընտանիք համագործակցության ազդեցությունը կրթության եվ դաստիարակության արդյունավետության գործում

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝
ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Աշխեն Մալխասյան

ԴՊՐՈՑ՝ <<Ճակքարի միջնակարգ դպրոց>>

Մարտունի-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան ...2

1. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԻ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ……2

1.1. Ընտանիքը՝ որպես հասարակության սոցիալական ինստիտուտ……4

1.2. Ժամանակակից ընտանիքի տեսակները……8

1.3. Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները և գործառույթները……9

2. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……**20**

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը Ժամանակակից ընտանիքներում ծնողները երեխաների դաստիարակության հարցերում հանդիպում են մի շարք խոչընդոտների՝ ժամանակակից ծնողների զբաղվածությունը, նրանց ցածր կրթական մակարդակը, թույլ հիմքերի վրա դրված ընտանեկան արժեքները, ընտանեկան դաստիարակության մասին մասնագիտական գիտելիքների, կարողությունների պակասը, դաստիարակության մեթոդներին չտիրապետելը: Այս առումով կարևորվում է ընտանիքի և դպրոցի փոխգործակցությունը, որն ապահովում է ծնողներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելը և ընտանեկան դաստիարակության գործընթացին օժանադակելը:

Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ենթարկվում,հարմարվում է համապատասխան սոցիալական միջավայրին, հասարակության պահանջներին, ազդեցություններին, իրականությանը :

Երեխան ծնվելով ընկնում է իր համար բոլորովին այլ, դժվարություններով լի մի աշխարհ, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է: Երեխան, աչքերը բացելով, տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա: Առհասարակ, դաստիարակչական ներգործությունների արդյունավետությունը կախված է ծնողների միջև առկա փոխհարաբերություններից, ընտանիքի կյանքի ձևից, «առողջությունից», բարեհաջողությունից, նրա երջանիկ մթնոլորտից:

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտությունների համաձայն, այն աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերումներ և ավելի որակով կատարած տնային առաջադրանքները, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, սիրով են

հաճախում դպրոց և ունեն հավատ սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ:

Միևնույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»: «Ծնողների ներգրավվածություն» հասկացությունը նշանակում է դպրոցի հետ միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման որակի նկատմամբ ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այդ պատասխանատվությունը միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին [20]:

Ընտանիքը մարդկանց կայուն սոցիալական հանրություն է, որն ունի բազմաթիվ տարիների պատմություն: Այն հասարակության տարր է հանդիսանում և կատարում է շատ կարևորագույն խնդիր՝ բնակչության թվի աճի, բազմացում: Դրա յուրահատկությունը կայանում է նրանում, որ մի քանի մարդ (մարդկանց խումբ), ամենասերտ փոխազդեցություն են ունենում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նմանատիպ ինտենսիվ փոխազդեցության համակարգում անհնար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Հետազոտության նպատակը դպրոց-ընտանիք համագործակցության ժամանակակից ձևերի բացահայտումն է:

Հետազոտության խնդիրներն են՝

ներկայացնել ընտանիքը՝ որպես հասարակության սոցիալական ինստիտուտ,

լուսաբանել ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները և գործառույթները, դպրոցի և ընտանիքի կապի տեսական-մեթոդաբանական հիմքերը,

- բացահայտել դպրոցի և ընտանիքի համագործակցության ժամանակակից ձևերը:

Հետազոտության առարկան դպրոց-ընտանիք փոխգործակցության գործընթացն է:

Հետազոտության օբյեկտը դպրոցականների ընտանեկան դաստիարակության համակարգն է:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտությունը տեսական նշանակություն ունի հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություններ կատարողների համար և գործնական նշանակություն՝ գործնական մանկավարժությամբ զբաղվողների, դպրոցի ուսուցիչների, դասղեկների, մանկավարժների, ծնողների համար:

Հետազոտության մեթոդներն են՝

Մանկավարժական գրականության վերլուծություն, զրույց, հարցում, հարցաթերթիկ:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից: Ընդհանուր ծավալը՝ համակարգչային էջ:

1.1. Ընտանիքը՝ որպես հասարակության սոցիալական ինստիտուտ

Ընտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ՝ ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն: Ֆրիդրիխ Էնգելսը, գործածելով ընտանիք հասկացությունը նախնադարյան հասկացության վերաբերյալ, նկատի ուներ մարդկանց այնպիսի խումբ, որի ներսում թույլատրվում էին սեռական հարաբերություններ: Նախնադարյան հոտի շրջանում, երբ ազգակցությունը չուներ հասարակական- տնտեսական նշանակություն, ընտանիք գոյություն չուներ: Մայրիշխանության պայմաններում առաջանում է հնագույն ընտանիք, ուր մի տոհմի բոլոր կանայք մի ուրիշ տոհմի բոլոր տղամարդկանց հնարավոր կանայք էին. տղամարդիկ ապրում էին իրենց տոհմում, երեխաները ճանաչում էին միայն իրենց մորը, համարվում նրա տոհմի անդամը և մտնում մոր գծով ազգականների խմբի մեջ: Հետագայում, խառնամուսնության ներսում, որոշ զույգերի համատեղ ապրելը նպաստեց զուգային, դեռևս անկայուն ընտանիքի առաջացմանը. ամուսինը սկսեց փոխադրվել կնոջ տոհմը /մայրատեղային բնակություն/, երեխաներն առաջվա նման պատկանում էին մոր տոհմին, իսկ ամուսինների ունեցվածքն առանձին էր: Այդպիսի ընտանիքներում ամուսիններն իրավահավասար էին [3]:

Նահապետական ընտանիքը անցումային ձև էր զուգային ընտանիքից մենամուսնական կամ փոքր ընտանիքի, ուր ծնողներն ու երեխաները առանձին տնտեսական բջիջ էին կազմում: Ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերում ուժեղանում է տղամարդու իշխանությունը ընտանիքում:

Կապիտալիստական հասարակարգում արտադրությանն անմիջականորեն մասնակցելու և սեփական վաստակի շնորհիվ կինն աստիճանաբար ապահովվում էր իր տնտեսական ինքնուրույնությունը: Հեղափոխական պայքարի ազդեցությամբ շատ երկրներում կանանց տրվեցին քաղաքացիական իրավունքներ /այդ թվում նաև ամուսնալուծության/: Կապիտալիզմի տնտեսական, քաղաքական և բարոյական հակասությունների հետևանքով ընտանիքը աստիճանաբար օտարվում է հասարակությունից:

Սոցիալիստական հասարակարգում ընտանեկան հարաբերություններն ազատվում էին նախորդ հասարակարգում առկա սոցիալական գործոններից /սեփականատիրական իրավունք, եկեղեցու ազդեցության, զանազան նախապաշարմունքներ և այլն/: Ընտանիքի անդամների փոխհարաբերությունները կառուցվում են փոխադարձ սիրո և հարգանքի վրա, տղամրդը և կինը ունեն հավասար իրավունքներ, անհատի և հասարակության շահերին նպաստող ընդհանուր հետաքրքրություններ:

Դեռևս վաղ ֆեոդալիզմի շրջանից ընտանիքի հիմնական ձևը Հայաստանում եղել է փոքր ընտանիքը, որին զուգահեռ պահպանվում էր նաև մեծ նահապետականը: Այդ շրջանի հայկական ընտանիքներում ևս հաստատված էր տղամարդու իշխանությունը: Նա էր տնօրինում հողը, նյութական մյուս միջոցները, լուծում ընտանիքի մյուս չափահաս անդամների ամուսնության, ժառանգության և այլ հարցեր: Հնագույն ընտանեկան ձևերի վերապրուկները հայերի մեջ, սկսած 20-րդ դարի սզբից, աստիճանաբար վերանում են [11]:

Ամերիկայի մեծագույն սոցիալական գիտնական Մարգարետ Միդը ընտանիքը նկարագրելու նպատակով ասել է. «Դեռ այն ժամանակվանից սկսած, ինչ ընտանիքի ինստիտուտը հիմնվել է մարդկության կողմից, այն հանդիսանում է ամենակայուն

սոցիալական ինստիտուտը: Հենց ընտանիքում է, որ յուրաքանչյուրս սովորում է լինել և հանդես գալ որպես անձ: Մարդկությանը դեռ հայտնի չէ մի այլ ճանապարհ անձ

«կերտելու», քան երեխային ընտանիքում դաստիարակելն է»: Չնայած Միդն այս խոսքերն ասել է երկու դար առաջ, սակայն սոցիալական ոլորտի մասնագետները շարունակում են կիսել այն կարծիքը,որ երեխայի խնամքի և սոցիալականացման լավագույն միջավայրը հանդիսանում է ընտանիքը: Ընտանիքը համարվում է այն կարևորագույն սոցիալական ինստիտուտը, որն ուղեկցում է մարդուն իր ողջ կյանքի ընթացքում և ունենում է մեծ ազդեցություն անձի ձևավորման գործընթացի վրա: Ընտանիքի ազդեցությունը մեծ է ոչ միայն անհատների, այլ նաև համայնքների և ողջ հասարակության վրա: Ընտանիքը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից և տարբեր մոտեցումների շրջանակներում: Առավել հայտնի մոտեցումները երկուսն են՝ սոցիոլոգիականը և սոցիալ-հոգեբանականը:

Սոցիալ-հոգեբանական մոտեցման համաձայն ընտանիքը դիտարկում է որպես փոքր խումբ, որի առանձնահատկությունները, գործառույթները, արժեքային և նորմային բնորոշումները կախված են ընտանիքի անդամ հանդիսացող մարդկանցից: Սոցիալական հոգեբանության մեջ փոքր խումբը դիտարկվում է որպես մարդկանց հանրույթ, որը ձևավորվում է համատեղ գործունեության շնորհիվ միջանձնային սերտ հարաբերությունների միջոցով: Ընտանիքը՝ որպես սոցիալական խումբ, օժտված է այնպիսի առանձնահատկություններով, որոնք բնորոշ են միայն նրան: Այդ առանձնահատկություններն են.

1. Ընտանիքի անդամներին միավորող ընդհանուր նպատակների առկայություն, որոնք կարող են փոփոխվել ընտանիքի զարգացմանը համընթաց:
2. Ընդհանուր նպատակների առկայությանը զուգահեռ՝ ընտանիքի անդամների անհատական հետաքրքրությունների և նպատակների առկայություն, ինչը փաստում է այն մասին, որ ընտանիքը հանդես է գալիս ոչ թէ որպես մարդկանց «ձուլման» արդյունքում ձևավորված խումբ, այլ ընտանիքի անդամների համատեղ գործունեության և համատեղ կյանքի կազմակերպման ձև:
3. Ամուսնական /և' պաշտոնական, և' ոչ պաշտոնական/ զույգի առկայություն, որոնց միջև առկա փոխհարաբերությունները մեծապես պայմանավորում են ընտանիքում դրսևորվող փոխհարաբերությունների բնույթը:
1. Տարբեր սերունդների ներկայացուցիչների ներառվածությունը

ընտանիքում:

2. Ընտանիքի անդամներին միավորող սերտ կապերի առկայություն:

Ընտանիքը դիտարկելով որպես փոքր խումբ՝ անհրաժեշտ է առանձնացնել նաև ընտանիքում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական որոշ գործընթացներ, որոնցից մեկը ընտանիքի անդամների շփումն է: Հենց շփման միջոցով են բացահայտվում և դրսևորվում ընտանեկան և միջանձնային փոխհարաբերությունները: Ընտանիքին բնորոշ է ևս մի առանձնահատկություն: Դա ընտանեկան միասնությունն է, որը նկարագրվում է որպես ընտանիքի անդամների միավորվածության և փոխկապվածության հոգեբանական բնորոշիչ:

Այսպիսով, ամփոփելով ընտանիքի վերաբերյալ առկա սահմանումների և նկարագրությունների լայն շարքը, կարելի է նշել մի հանգամանք. չնայած «ընտանիք» հասկացությունը հայտնի է բոլորին և ամենուր, այնուամենայնիվ, այդ հասկացության բնորոշումներն ու ընկալումները տարբերվում են հասրակությունից հասարակություն, խմբից խումբ և նույնիսկ անհատից անհատ տեղափոխվելիս:

Այսօր ընտանիքը հիմնականում դիտարկվում է որպես.

1. Կենսաբանական միավոր, որը նշանակում է, որ ընտանիքը ձևավորվում է արյունակցական կապերի և երեխաների ծննդի միջոցով:
2. Սոցիալական միավոր, որը ենթադրում է, որ ընտանիքի անդամները վարում են համատեղ տնտեսություն և գործառնում են հասարակության մեջ որպես մի միասնական համակարգ:
3. Հոգեբանական միավոր, ինչը վկայում է այն մասին, որ ընտանիքի ներսում առկա են միջանձնային սերտ փոխհարաբերություններ, ներընտանեկան շփումներ և էմոցիոնալ սերտ կապեր:

Ավանդաբար ընտանիքը համարվում է առաջնային այն սոցիալական խումբը,որում ծնվում են անհատները: Այսպիսով, ընտանիքն առաջին հերթին միջանձնային փոխհարաբերությունների համակարգ է, որը համարվում է հասարակության ամենափոքր, սակայն միևնույն ժամանակ ամենակարևոր համակարգերից մեկը :

Ժամանակակից ընտանիքի տեսակները

Ընտանիքի տեսակները բազմազան են: Ընտանիքի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետները գրեթե համակարծիք են, որ մինչև այժմ ընտանիքի տեսակների գիտական տիպավորում գոյություն չունի: Պատճառներից մեկը տիպերի առանձնացման համար անհրաժեշտ խորքային, սոցիալ հոգեբանական չափանիշների բացակայությունն է, այդպիսիք ընտրելու խիստ բարդությունն ու պատասխանատվությունը: Բայց առաջարկվել են ընտանիքի բազմաթիվ դասակարգումներ, որոնք օգտակար են քանի որ առաջին անհրաժեշտ քայլն են ընտանիքի հետ կապված խնդիրներոի ուսումնասիրության համար:

Առանձնացնում են ընտանիքի երկու հիմանական տիպ.

1. Նուկլեար ընտանիք
2. Ընդարձակ ընտանիք

«Նուկլեար» տերմինն առաջացել է «nuclea» բառից, որը նշանակում է միավոր կամ հիմք: Այդ տերմինը նկարագրում է ընտանիքի այն տիպը, որը կազմված է երկու սերնդի ներկայացուցիչ հանդիսացող անձանցից, որոնք ապրում են մի հարկի տակ և վարում են համատեղ տնտեսություն: Սովորաբար այդպիսի ընտանիքները կազմված են լինում ծնողներից և երեխաներից: Ի տարբերություն նուկլեար ընտանիքի՝ ընդարձակ ընտանիքը բաղկացած է լինում երեք և ավելի սերունդների ներկայացուցիչներից: Հիմնականում այդպիսին համարվում են տատիկները, պապիկները և այլ հարազատներ: Ընդ որում, այդ հարազատները կարող են չապրել միևնույն հարկի տակ, սակայն եթե նրանք կապված են միմյանց հետ արյունակցական կամ հուզական սերտ կապերով և պարբերաբար հանդիպում են միմյանց, ապա այս դեպքում ևս նրանք կարող են համարվել որպես ընդարձակ ընտանիքի անդամներ: Այսպիսի ընտանիքներին բնորոշելու համար կիրառվում է «սփռված ընտանիք» հասկացությունը: Վերոնշյալ հասկացությունը կարելի է օգտագործել բնորոշելու համար նաև այնպիսի ընտանիքների, որոնց անդամներից մեկը /հայրը կամ մայրը/ գտնվում է այլ երկրում հարաբերականորեն երկար ժամանակահատվածով, սակայն շարունակում է կապ պահպանել ընտանիքի անդամների հետ:

1.1. Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները և գործառույթները

Հասարակությունը ներկայացնում է տարբեր սոցիալական ինստիտուտների ամբողջություն, որոնք սերտորեն փոխկապակցված են և գտնվում են փոխհամաձայնության մեջ: Սոցիալական յուրաքանչյուր ինստիտուտ նախատեսված է որոշակի սոցիալական պահանջմունքների բավարարման համար: Այսպես,
«կրթություն», «մշակույթ», «կրոն», «ընտանիք» և այլ սոցիալական ինստիտուտների միջոցով երեխան անցնում է սոցիալականացման գործընթացի հիմնական փուլերը՝ անհատից դառնալով անձ և վերածվելով անհատականության: Եվ ինչպես գերմանացի գիտնական Դյուրկհեյմն էր ասում. «Հիշյալ սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է» , որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր, ծանոթանալով և յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը:

Նշյալ սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը, որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք, որի զարգացմամբ շահագրգռված են թե՛ հասարակությունը, թե՛ պետությունը: Այն մեզանում ազգապահպան վճռորոշ գործոններից է, հասարակության սոցիալ-տնտեսական և ազգային-մշակութային գործառույթների իրականացման հիմնական օղակը: Այստեղ է ծնվում երեխան, սկսվում անձի ձևավորումը, զարգացումն ու դաստիարակությունը, այստեղ է երեխան յուրացնում սոցիալական դերերը, որոնք անհրաժեշտ են հասարակական գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական, վարքագծային նորմեր, կանոններ, իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին: Ինչպես նշում է Ն.Ի.Դերեկլեևան. «Ընտանիքը կարելի է համեմատել մեկնարկային հրապարակի հետ, որը որոշում է մարդու կենսական երթուղին: Յուրաքանչյուր մեծահասակ, և առաջին

հերթին ծնողները, պատասխանատու են այն բանի համար, որ խնդիրները, որոնք երեխան կհանդիպի իր ճանապարհին, կարողանա հաղթահարել արժանապատվորեն ու ազնվորեն» [10, էջ 8]: Ըստ Ն.Նյուկոմբի՝ «Յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր ծնող իր երեխային դաստիարակում է յուրահատուկ անհատական մոտեցումներով… Դաստիարակման ընթացքի վրա շատ է ազդում ընտանիքի այս կամ այն մշակույթի պատկանելիությունը… Տվյալ հասարակության նորմերն ու արժեքները, սովորույթները, ծեսերը շատ մեծ դեր են խաղում երեխայի դաստիարակության վրա» [12, էջ 394-396]: Այլ խոսքով, ազգային, համամարդկային և հասարակական բարոյական արժեքներին երեխան սկսում է ծանոթանալ ընտանիքի անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների շնորհիվ: Ընտանիքում են դրվում երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգևոր-բարոյական, էկոլոգիական, գեղագիտական դաստիարակության հիմքերը, նրա մշակութային զարգացումը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով ու վարքագծով, կարևորվում են նրանց արժեքային կողմնորոշումները, որոնք երեխայի համար ընդօրինակման առաջին նմուշներ են: Երեխաները ընդօրինակելով ծնողների վարքագծային մոդելները՝ ներքնայնացնում են դրանք, համապատասխանեցնում իրենց անձին, որի հիման վրա էլ ձևավորվում է վարքագիծը, արժեքային համակարգը: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողն ու ժառանգորդը, որոնց հիման վրա էլ ձևավորվում է նրա աշխարհայացքը:

Աճող սերնդի՝ որպես ընտանեկան արժեքների կրողի նշանակալիությունը մշակույթում ընդգծվում է նաև նրանով, որ նրանք մարմնավորում են ապագա մարդկությանը: Յուրաքանչյուր արժեք կարող է բնութագրվել որպես հավերժական, բացարձակ և համամարդկային միայն այն դեպքում, երբ կապված է ապագայի հետ և լի է հնարավորություններով :

Ընտանեկան դաստիրակության ոճերը ընտանիքում երեխաների հետ ծնողների շփման, նրանց վարքի վերահսկողության և կիրառվող դաստիարկության մեթոդների համակարգն է:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել ընտանեկան դաստիարակության տիպերի դասակարգման և նկարագրման տարբեր մոտեցումներ: Ավելի հաճախ հոգեբանամանակավարժական ուսումնա-սիրություններում, հիմք

ընդունելով Դ. Բաումրինդի (Baumrind D.) աշխատանքները, առանձնացնում են դասակարգման երկու չափանիշներ՝

1. ծնողական ջերմության, երեխայի հետ հուզական մտերմության աստիճանը, որն արտահայտվում է ծնողների կողմից ցուցաբերվող սիրո, ընդունման, հոգեբանական աջակցության տեքսով, կամ՝ քննադատության, մեղադրանքի, պատժի,
2. ծնողական վերահսկողության աստիճանը, որը դրսևորվում է երեխայի վարքի սահմանափակումների, որոշակի կանոններին խիստ ենթարկվելու, պարտականությունների կատարման ձևով: Հիմք ընդունելով վերոնշված չափանիշներից յուրաքանչյուրի երկու ծայրահեղ դրսևորումները, առանձնացնում են դաստիարկության չորս տիպեր:

Կարծում ենք ընտանիքի չափանիշները կարելի է լրացնել հետևյալ չափանիշներով ևս.

- ժողովրդագրական՝ ընտանիքի կառուցվածքը (երեխա չունեցող, մի երեխայով քիչ կամ շատ երեխաներ ունեցող, լիարժեք կամ ոչ լիարժեք),
- սոցիալ-մշակութային՝ ծնղների կրթական մակարդակը, նրանց մասնակցությունը հասարակական կյանքին,
- սոցիալ-տնտեսական՝ ծնողների նյութական վիճակի բնութագիրը և աշխատանքային զբաղվածությունը,
- սոցիալհիգենիկ՝ ապրելու պայմանները, տան կահավորվածությունը, կենսակերպի առանձնահատկությունները:

Հեղինակության վրա հիմնված առանձնահատկությունը, ենթադրում է ընտանիքում հուզականորեն ջերմ հարաբերությունների և ծնողների կողմից ցուցաբերվող բարձր վերահսկողության համադրություն: Ծնողները դրսևորում են հետևողական վերահսկողություն իրենց երեխաների գործողությունների նկատմամբ, սակայն միևնույն ժամանակ խրախուսում են նրանց վարվելաձևին վերաբերող կանոնների և պահանջների համատեղ ընտանեկան քննարկումը, ինչի արդյունքում ծնողների որոշումները երեխաներին չեն թվում անհիմն կամ անարդարացի, այլ՝ ընդհակառակը ստեղծում են համագործակցության մթնոլորտ: Որպես կանոն, նման ընտանիքներում մեծացող երեխաները ունենում են ադեկվատ ինքնագնահատական,

սոցիալական հմտություններ, լինում են վստահ, դրսևորում են բարձր ուսումնական առաջադիմություն:

Քննարկելով ընտանիքի հիմնական գործառույթները հետարդյունաբերական հասարակությունում և դրանց փոփոխումը՝ որպես առաջատար տեխնոլոգիաների զարգացման արդյունք, Վ.Ֆ Օգբուռնը նկատում է, որ զարգաման հետ մեկտեղ ընտանիքը կորցնում է իր որոշ գործառույթները, իսկ որոշներն էլ ուժեղացնում :

Տ.Պարսոնսը նշում է, որ ժամանակակից արդյունաբերական հասարակությունում ընտանիքը երկու կարևորագույն գործառույթ ունի: Առաջինը՝ երեխաների սոցիալականացում, իսկ երկրորդը՝ մեծահասակների «անհատականության կայունացումը» : Նա գտնում էր, որ մյուս բոլոր բնագավառներում ընտանիքի գործառութային կարևորությունը անկում է ապրում, քանի որ վերջինիս ավանդական մի շարք գործառույթների իրագործումը իրենց վրա են վերցնում այլ սոցիալական կառույցներ: Տ.Պարսոնսի դրույթը կարելի է չհամաձայնվել այն տեսակետից, որ նա անտեսում է ընտանիքի ամենակարևոր գործառույթներից մեկը՝ վերարտադրության գործառույթը:

Ըստ Ա.Եսայանի ընտանիքը կատարում է վերարտադրողական գործառույթ:

Այս գործառույթը հաճախ կոչվում է նաև ծննդի և վերարտադրման: Յուրաքանչյուր հասարակության խնդիրներից մեկը հասարակության նոր անդամների վերարտադրում է: Այսինքն այս գործառույթի շնորհիվ, երեխաների լույս աշխարհ գալով, ապահովում է հասարակության շարունակական գոյությունը: Ընտանիքն այն կարևոր սոցիալական ինստիտուտներից մեկն է, որը պատասխանատու է հասարակության նոր անդամների վերարտադրման հարցում: Տվյալ գործառույթը լուծում է երկու հիմնական խնդիր՝ անհատական, որը ենթադրում է ընտանիքի երեխա ունենալու կարիքի բավարարում, և հասարակական, որը ենթադրում է բնակչության կենսաբանական վերարտադրություն: Այս գործառույթը սերտորեն կապված է հասարակության առողջության պահպանման հետ: Շատ կարևոր է, որպեսզի երեխաները ծնվեն թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես առողջ: Ընտանիքի կարևորագույն խնդիրներից մեկը դառնում է ապագա սերունդների մոտ կենսաբանական շեղուների կանխումը: Սակայն ներկայումս վերարտադրման

գործառույթը որոշակի փոփոխություններ է կրել: Այդ փոփոխությունները կայանում են նրանում, որ այժմ վերարտադրությունն իրականացվում է նաև ընտանիքից դուրս:

Սոցիալականացում: Ընտանիքը կատարում է աճող սերնդի սոցիալականացման գործառույթը: Ընտանիքը երեխաների համար համարվում է առաջնային խումբ, որտեղից էլ սկսվում է անձի զարգացումը: Երեխայի մոտ միշտ էլ մնում են վաղ մանկության շրջանից ընտանիքի հիմնական վարքային նմուշները: Ընտանիքն այն ինստիտուտն է, որտեղ երեխան սովորում և յուրացնում է հասարակության նորմերը, արժեքները, ավանդույթներն ու սովորույթները: Ընտանեկան սոցիալականացման հիմնական միջոցը համարվում է երեխաների կողմից ընտանիքի չափահաս անդամների վարքի մոդելների ընդօրինակումը:

Ընտանիքն առանձին սոցիալական գործակալ է հանդիսանում, որտեղ հիմք է դրվում անձի ձևավորման ու զարգացմանը, որպես հասարակության լիարժեք անդամ: Ընտանիքում երեխան սովորում է խոսել, մտածել և այլն: Ընտանիքում է սկսվում ձևավորվել նրա աշխատանքային տարրերը:

Ապահովում: Այս գործառույթը ենթադրում է ընտանիքի անդամների կյանքի համար նյութական պայմանների ապահովումը, գոյության համար անհրաժեշտ միջոցների ապահովում: Այդ կերպ ավելի են ամրապնդվում ընտանիքի անդամների միջև կապերը, նյութապես ապահովվում են անաշխատունակ և անչափահաս մարդիկ:

Պաշտպանության: Բոլոր հասարակություններում ընտանիքի ինստիտուտը իրականացնում է իր անդամների ֆիզիկական, տնտեսական և հոգեբանական պաշտպանությունը: Այս գործառույթը տարբեր հասարակություններում տարբեր չափով է իրականացվում: Ընտանիքը պետք է ինչպես էմոցիոնալ պահանջմունքների, այնպես էլ ֆիզիկական պահանջմունքների լայն հավաքակազմ բավարարի, ինչպես օրինակ՝ սննդի և ապաստարանի պահանջը: Այն հիվանդության և ծերության ընթացքում ապահովում է ֆիզիկական խնամք ճգնաժամային իրավիճակներում, էմոցիանալ աջակցություն և այլն: Բոլոր այս պահանջմունքներն առաջին հերթին բավարարվում են ընտանիքում, ընտանիքի կողմից:

Հուզական աջակցություն: Այս գործառույթը ենթադրում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի՝ սիրո, ջերմության, փոխադարձ հասկացողության, հոգեբանական պաշտպանության կարիքների բավարարումը: Մասնագետները

կարծում են որ երեխայի մոտ հուզական և վարքային դժվարություններ առաջանում են վերը թվարկվածների բացակայության պատճառով: Հետազոտությունները հուշում են, որ լուրջ հանցագործությունները և այլ շեղումները տեղի են ունենում շատ հաճախ նրանց մոտ, ովքեր զրկված են եղել էմոցիոնալ աջակցությունից: Մարդկանց կենսական գոյության տարր են հանդիսանում վստահելի հարաբերությունները, սերտ շփումները մտերիմների հետ: Հոգեկան առողջության պահպանումը ընտանիքի էմոցիոնալ աջակցության գործառույթի կարևորագույն խնդիրներց է:

Տնտեսական գործառույթ: Յուրաքանչյուր ընտանիք ունի իր տնտեսությունը, եկամուտները և ծախսերը: Այս գործառույթը ենթադրում է, որ ընտանիքի անդամները վաստակում են միջոցներ կենսական պայմանները ապահովելու համար: Նախկինում դա դրված էր միայն տղամարդու վրա, այժմ ընտանիքի անդամները հավասարապես կարող են աշխատել:

Կարգավիճակային գործառույթ: Յուրաքանչյուր մարդ, դաստիարակվելով ընտանիքում, ձեռք է բերում որոշակի կարգավիճակ: Օրինակ, ազգություն, ռասա: Վերջիններս ավելի շուտ բնածին կարգավիճակներ են: Ընտանիքի սոցիալականացման գործընթացի միջոցով իրականացվում է նաև երեխայի կողմից ընտանիքի կարգավիճակը ստանձնելու դերային նախապատրաստությունը՝ երեխայի մոտ ձևավորելով համապատասխան շահեր, հետաքրքրություններ, արժեքներ և ապրելակերպ:

Ռեկրիատիվ գործառույթ: Այս գործառույթի էությունը կայանում է նրանում, որ ընտանիքը շատերի համար հանդիսանում է այն միջավայրը, որտեղ կարելի է հանգստանալ, նոր լիցքեր ստանալ, այլ կերպ ասած՝ ընտանիքը նպաստում է իր անդամների սոցիալ- հոգեբանական վերականգմանը :

Ընդհանրացնելով տեսական հիմնական մոտեցումների շրջանակներում ներկայացված դրույթները՝ կարելի է առանձնացնել ընտանիքի ինստիուտի հետևյալ գործառույթները.

- վերարտադրողական,
- դաստիարակչական,
- սոցիալականացման,
- ապահովության,
- պաշտպանության,

- հուզական աջակցության,
- տնտեսական,
- կարգավիճակային,
- զարգացման,
- արժեքային տրանսֆորմացիայի,
- կոլեկտիվ ձեռնարկումների:

Ըստ ընտանիքի գործառույթների էլ դասակարգվում են ընտանիքի տիպերը՝ բարենպաստ ընտանիքներ, անբարենպաստ ընտանիքներ:

Դպրոցի և ընտանիքի կապի տեսական-մեթոդաբանական հիմքերը

Դպրոցը, ընտանիքը և հասարակությունը այն գլխավոր օղակներն են, որոնց համատեղ ջանքերով լիարժեք է դառնում մատաղ սերնդի դաստիարակությունը ու նրա ներդաշնակ զարգացունը: Բնական է, որ այդ գործում հիշյալ օղակներից որևէ մեկի թերացումը զգալի վնաս կարող է հասցնել ընդհանուր գործին: Այդ օղակները կոչված են օգնելու մեկը մյուսին լրացնելու, շտկելու թույլ տրված սխալներն ու բացերը: Ահա թե ինչու այս կարևոր հիմնախնդիրը մշտապես գերակա է համարվում յուրաքանչյուր պետության կրթական քաղաքականության մեջ:

Դպրոցի և ընտանիքի համատեղ աշխատանքի հիմքում պետք է դրվեն դաստիարակության հետևյալ խնդիրները.

1. Անձի ընտանեկան, մտավոր, բարոյական, քաղաքացիական, էկոլոգիական, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, աշխատանքային, սեռական դաստիարակությունը:
2. Անձի աշխարհայացքի ձևավորումը:
3. Հոգևոր-բարոյական զարգացումը:
4. Բարոյական նորմերը անձնական համոզմունք և մշտական վարքագիծ դարձնելը:

Այդ խնդիրներն իրականացնելու համար կարևոր նշանակություն ունեն դպրոցականի գործունեության ճիշտ, նպատակասլաց ղեկավարումն ու խթանումը և

դպրոցականին իր դաստիարակության սուբյեկտ դարձնելը: Ուստի հրատապ պահանջ է դառնում անձի դաստիարակության մեթոդների, տեխնոլոգիաների, միջոցների և ձևերի մշակման և այդ գործընթացում դրանց ներդնման անհրաժեշտությունը:

Ավելի քան հարյուր տարի առաջ հայ անվանի վիպասան Ռաֆֆին ասել է, որ լավ երեխաներ մեծացնելու համար պետք է ունենալ կրթված մայրեր: Միևնույն ժամանակ նա նշել է, որ ծնողներին մանկավարժական գիտելիքներով զինելու կենտրոնը դպրոցն է:

Դպրոցը ոչ միայն պետք է լուծի աճող սերնդի կրթության ու դաստիարակության խնդիրները, այլև ապահովի դպրոցի և ընտանիքի փոխգործակցությունը երեխաների դաստիարակության հարցում, ինչպես նաև ղեկավարի ծնողներին մանկավարժական գրագիտության և մանկավարժական մշակույթի ձևավորման գործընթացը:

Երեխաների դաստիարակության գործընթացի արդյունավետ կազմակերպման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերի լուծումը դպրոցի և ընտանիքի փոխգործակցության դրդապատճառները նրանց ընդհանուր նպատակներն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն

արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Օժեգովի ռուսաց լեզվի բառարանում «փոխգործակցություն» հասկացությունը բացատրվում է որպես միմյանց վրա օբյեկտների (սուբյեկտների) անմիջական կամ միջնորդավորված ազդեցության գործընթաց, որն առաջացնում էր դրանց փոխադարձ պայմանավորվածությունը և կապը, այն ընդհանուր գիտական ու մարդասիրական հիմնարար հասկացություններից է [13]:

Դպրոցի և ընտանիքի փոխգործակցությունը միջանձնային փոխգործակցության ձևերից է, որը ենթադրում է համատեղ գործունեության շփման ձև և իրականացման եղանակ: Այս հիմնախնդիրը ուսումնասիրվել է ինչպես փիլիսոփաների (Լ.Մ.Արխանգելսկի, Վ.Գ.Աֆանասև), սոցիոլոգների (Ու.Բեր, Տ.Պարսոնս), հոգեբանների (Ս.Ռ.Գևորգյան, Կ.Ա.Աբուլխանովա-Սլավսկայա, Ա.Վ.Պետրովսկի և այլք), մանկավարժների (Ա.Ն.Բոյկո, Լ.Ի.Նովիկովա, Ս.Պ.Սիդելկովսկի):

Երեխաների և ընտանիքի անդամների փոխգործակցությունը տեղի է ունենում ներընտանեկան շփման ընթացքում, որտեղ ծնողները հանդես են գալիս որպես տեղեկատվության, գաղափարների, արժեքային կողմնորոշումների, կարծիքների, հայացքների աղբյուր: Դրանով իսկ ծնողները ազդում են երեխաների հուզական ոլորտի վրա:

Հետազոտողների կողմից առանձնացվել են ներընտանեկան փոխգոր-ծակցության տիպերը ըստ որոշակի հատկանիշների ընդհանրության:

Կ.Ե.Իգոշևը և Գ.Մ.Մինկովսկին առանձնացնում են ներընտանեկան փոխգործակցության հետևյալ տիպերը՝

- ըստ ծնողների և երեխաների հեղինակության մակարդակի,
- ըստ ընտանիքում երեխաների դաստիարակության և կենսական իրավիճակների փորձի առկայության և բացակայության, ազդեցությունների բնույթի և ինտենսիվության,
- ըստ դաստիարակության դիրքորոշման բնույթի և դաստիարակչական ներգործությունների օբյեկտիվ հնարավորությունների:

Մանկավարժական գրականության մեջ առանձնացվում են ծնողների ու երեխաների փոխգործակցության հետևյալ որոշիչները.

ծնողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունները,

երեխայի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները,

սոցիալ-մշակութային և ընտանեկան ավանդույթները,

բնավորության գործոնը, որը պայմանավորված է մոր հետ երեխայի վաղ շփումներով,

ընտանիքի չափահաս անդամների հաղորդակցական առանձնահատկությունները:

Ռուս հոգեբան Կ.Ա.Աբուլխանովա-Սլավսկայան առանձնացնում է փոխգործակցության վարքագծային հետևյալ առանձնահատկությունները.

համագործակցություն. թե՛ ծնողները, թե՛ երեխաները ներընտանեկան փոխգործակցության իրավահավասար սուբյեկտներ են, որոնք աջակցում են միմյանց, ակտիվորեն նպաստում յուրաքանչյուրի անհատական նպատակների և համատեղ գործունեության ընդհանուր նպատակների իրականացմանը,

հակամարտություն. ծնողներն ու երեխաները հակազդում են միմյանց և խոչընդոտում յուրաքանչյուրի անհատական նպատակների իրականացմանը,

խուսափում փոխգործակցությունից. ծնողներն ու երեխաները որպես հնարավոր գործընկերներ տարբեր պատրվակներով ջանում են խուսափել ակտիվ փոխգործակցությունից,

միակողմանի փոխգործակցություն. համատեղ գործունեության մասնակիցներից մեկը (հաճախ ծնողները) ջանում է նպաստել մյուսի անհատական նպատակների իրականացմանը, իսկ երկրորդը խուսափում է նրա հետ փոխգործակցությունից,

միակողմանի հակազդեցություն. գործընկերներից մեկը խոչընդոտում է մյուսի նպատակների իրականացմանը, իսկ երկրորդը խուսափում է առաջին մասնակցի հետ փոխգործակցությունից,

հակադրական փոխգործակցություն. փոխգործակցության սուբյեկտներից մեկը ջանում է աջակցել մյուսին, որը դիմում է առաջինին ակտիվորեն հակազդելու վարվելակերպին, փոխզիջումային փոխգործակցություն. երկու կողմն էլ դրսևորում են ինչպես աջակցության, այնպես էլ հակազդեցության առանձին տարրեր (6, էջ 66):

Միաժամանակ սոցիալական հոգեբանության մեջ առանձնացվում են ներընտանեկան փոխգործակցության հետևյալ ոճերը (ավտորիտար, ազատական, ժողովրդավարական), որոնք հիմնավորապես ազդում են ծնողների և երեխաների միջանձնային հարաբերությունների և երեխայի բնավորության գծերի, դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների ձևավորման վրա:

Դպրոցի և ընտանիքի փոխգործակցությունը հենվում է այն նպատակի վրա, որ անհրաժեշտ է ապահովել մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների գործընկերային հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, որի շնորհիվ բարենպաստ պայմաններ կստեղծվեն ուսուցման և դաստիարակության համար:

Ուսուցիչների և ընտանիքի փոխգործակցության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց ընդունակությունների, կրթական մակարդակի, հայացքների ու դիրքորոշումների, ինչ տեղ ու դեր են հատկացնում իրենց երեխաների դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը կոլեկտիվ ու անհատական աշխատանքի ձևերն են:

Այսպիսով մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով «Ընտանիքի և դպրոցի փոխգործակցությունը որպես ընտանեկան դաստիարակության արդյունավետության միջոց» խորագրով հետազոտությունը գալիս ենք հետևյալ եզրահանգման՝

1. ժամանակակից ընտանիքներում երեխաների ընտանեկան դաստիարակության վրա ազդում են հետևյալ գործոնները՝ ծնողների զբաղվածությունը, նրանց ցածր կրթական մակարդակը, թույլ հիմքերի վրա դրված ընտանեկան արժեքները, ընտանեկան դաստիարակության մասին մասնագիտական գիտելիքների, կարողությունների պակասը, երեխաների կյանքի մասին ինֆորմացիայի պակասը, ոչ բավարար վերահսկողությունը:
2. Դպրոց-ընտանիք փոխգործակցության արդյունավետությունը պայմանավորված է ՝
   - գործունեության նպատակների որոշակիացմամբ,
   - համատեղ աշխատանքի պլանավորումով,
   - ուժերի և միջոցների համատեղ բաշխմամբ,
   - աշխատանքի համատեղ հսկողությամբ և գնահատմամբ,
   - ծագած հակասությունների համատեղ հաղթահարմամբ:

3. Ընտանեկան դաստիարակությունը արդյունավետ կլինի, եթե կիրառվեն դպրոց-ընտանիք փոխգործակցության հետևյալ ձերը՝
   - ծնողների մանկավարժական լուսավորության կազմակերպում,
   - մանկավարժական թեմաներով սեմինարների, խորհրդատվությունների կազմակերպում,
   - ընտանեկան դաստիարակության վերաբերյալ գիտաժողովներին, կլոր սեղաններին ծնողների մասնակցություն,
   - ծնողների ակտիվ ներգրավում դպրոցի արտադասարանական դաստիարակչական միջոցառումներին:

4. Դպրոց-ընտանիք փոխգործակցության ժամանակակից ձև է նաև ծնողական օրագիրը: Ծնողական օրագիրը սովորական տետր է, որտեղ ծնողները կատարում են գրառումներ: Այն ձևավորվում է դասղեկ-ծնող առաջին հանդիպման ժամանակ: Օրագիրը լրացնում է յուրաքանչյուր ընտանիք:

5. Դպրոց-ընտանիք փոխգործակցության ժամանակակից ձևերից են նաև դասղեկ-ծնող համատեղ ջանքերով պլանավորված դասղեկի ժամերը, որոնք նպաստում են ընտանեկան դաստիարակության արդյունավետությանը:

6 Դպրոց-ընտանիք փոխգործակցության ժամանակակից ձևերից է նաև առցանց ծնողական ժողովը, որն ապահովում է գրեթե բոլոր ծնողների մասնակցությունը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է գտնվում ծնողը՝ երկրում է, թե բացակայում է, աշխատավայրում է, թե տանը: Այն ժողովին միաժամանակ մասնակցելու հնարավորություն է տալիս երեխայի և՛ մորը, և՛ հորը: Վերը նշված հեռավար ժողովների կազմակերպման համար այսօր առավել գործածական են zoom, Microsoft teams հարթակները:

7. Դպրոց-ընտանիք փոխգործակցության ժամանակակից ձև է նաև ծնողների մասնակցությունը աշակերտների ուսումնական գործու-նեությանը՝ առանձին համատեղ խմբակային պարապմունքների անցկացում, առարկայական թեմատիկ երեկոների կազմակերպում և անցկացում, մասնակցություն վահանակների ձևավորմանը, դիդակտիկ պարագաների պատրաստում. դպրոցականներին ուսուցումը, ուսումնական թեմատիկ էքսկուրսիաների կազմակերպում ու անցկացում, ուսումնական կաբինետ- ների ձևավորում դպրոցականների օգնությամբ, լրացուցիչ պարապմունքների անցկացում թույլ սովորող աշակերտների հետ, զեկուցումներ, հաղորդումներ սովորողների խմբի առջև, գիտահանրամատչելի, ուսումնական ֆիլմերի դիտում, դրանց քննարկում, ընտանիք-դպրոց համատեղ պլանավորված բարեգործական, կամավորական աշխատանքներ:

Ուսումնասիրությունները հիմք են տալիս փաստելու, որ դպրոցի, ընտանիքի և երեխաների համագործակցության դրական բնութագրերը կարող են փոխվել և արդյունավետ դառնալ, եթե այդ փոխգործակցությունը կազմակերպվում է համատեղ ստեղծագործական գործընթացում՝ հաշվի առնելով դպրոցի, համայնքի ընդհանուր և կոնկրետ առանձնահատկությունն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բորյան Ս.Գ., «Դպրոցի և ընտանիքի մանկավարժական ներգործության միասնությունը», Երևան, 1975թ.:
2. Եսայան Ա., Սոցիալական ուսմունք, սոցիալական աշխատանք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009, 620 էջ:
3. Էնգելս Ֆրիդրիխ, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1965: